


ՆԵՂՈՒԹԵԱՆ ՊԱՍԿԸ

Գոհութիւն յայտնենք Աստուծոյ ամէն բանի մէջ, ե՛ւ նեղութեան, ե՛ւ հանգիստի, որովհետեւ երկուքն ալ օգտակար են արդարներուն եւ մեղաւորներուն համար: Պօղոս եւս, որուն ո՛չ ոք կրնար նմանիլ, նեղութեամբ անցուց իր կեանքը: Եւ որովհետեւ գայն շահ կը նկատէր եւ ո՛չ վնաս, անոր համար կ'ըսէ. «Ամէն անոնք, որոնք կ'ուզեն Քրիստոսով աստուածապաշտութեամբ ապրիլ, պիտի հալածուին եւ նեղութիւն կրեն» (Բ. Տիմ. Գ.12): Արդարեւ, առաքիլութեան ճամբէն գացող մարդը չի կրնար առանց վիշտի եւ նեղութեան ըլլալ:

Երբ Յոբ, իր ժամանակ, մարդու կեանքը երկրի վրայ փորձութիւն է, կ'ըսէր, ո՞րչափ աւելի է հիմա եւ կամ՝ ապագային: Կրնա՞յ մէկը պատերազմի մէջ ըլլալ եւ հանգիստ փնտոյն. արդ, քանի որ նեղութիւններն ու փորձութիւնները այս աշխարհի պատերազմներն են, հիմա հանգիստի ժամանակ չէ, այլ՝ քրտիմքի: Ինչպէս, որ ըմբիշները նախ կը մերկանան, կ'օծուին եւ ապա կը կոուին, նոյնպէս դուն, որ Աւագանով մերկացար եւ լուացուցար ու միւռոնով օծուցար, պէտք է կոուիս: Եթէ հանգիստ կը փնտոնես, ինչո՞ւ մերկացար եւ կոուի պատրաստուցար: Նեղութիւնը բոլորին համար է, ե՛ւ արդարները ե՛ւ մեղաւորները կը չարչարուին, սակայն տարբեր ձեւերով:

**ՅՈՐՈՐԱԿՆԵՐ
ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵԿՈՐՑԻ**

ՍՐԲԱՆՈՅՍ ՄԻՐՈՆԸ



Միւռոնը Խորհրդանիշն Ու Խորհուրդն Է Սուրբ Հոգիին

Միւռոնը ո՛չ միայն խորհրդանիշն է Սուրբ Հոգիին, այլեւ՝ խորհուրդն է Սուրբ Հոգիին, խտացեալ զօրութիւնն է Սուրբ Հոգիին, թանձրացեալ պատկերն է Սուրբ Հոգիին: Նիւթական միւռոնը աննիւթական Սուրբ Հոգիին շոշափելի ներկայութիւնն է, որ երբ համակէ մեր էութիւնը, մեր սիրտն ու հոգին, մեզ կ'ազատէ նիւթին ու նիւթականին գերութենէն:

Երեւելի միւռոնը աներեւելի Սուրբ Հոգիին երեւելի նշանն է, որ մարդուն մէջ աներեւելի կերպով կը գործէ, որուն արդիւնքը սակայն երեւելի կ'ըլլայ:

Համբուրելի ու Սուրբ Հոգիին համբոյրն է միւռոնը, որ երբ տրուի մարդուն, Աստուծոյ սիրոյն հպումը կը զգայ մարդը:

Սուրբ Հոգիին առազա՛ստն է միւռոնը, ուր երբ մտնէ մարդը, կը դառնայ ըմբոշխնիչն ու երգիչը Աստուծոյ սիրոյն:



ԲՈՒ ԽՈՍԲԻ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 12 ՅՈՒՆԻՍ 2022 ԹԻՒ 24

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գ. Թգ. 18.29-46: Դ. Թգ. 2.1-15: Յկ. 5.15-20: Ղկ. 4.25-30

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 4.25-30

Չեզի օրինակներով խօսիմ: Իսրայելի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկինքը չանձրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ռեւէ մէկուն չորկուեցաւ, այլ՝ դրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփթա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայելի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ՝ միայն Նէեման անունով ասորի մը:

Այս ակնարկութիւնները լսելով, ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

ՔԱԼԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Աստուածաշունչը կը հաստատէ, թէ «Նոյ Աստուծոյ հետ փախեց» (Մն. 6.9): Աստուծոյ հետ փախել, կը նշանակէ Աստուծոյ հետ ապրիլ եւ անոր ընկեր դառնալ: «Աստուծոյ հետ փախեց» բացատրութիւնը ակնարկութիւն է այն մտերմութեան եւ մօտիկութեան, որ Նոյ ունէր Աստուծոյ հետ: Աստուծոյ հետ փախելը՝ Աստուծոյ հանդէպ կատարեալ հնազանդութիւն ցուցաբերել է: Դիւրին չէր Նոյին համար փախել Աստուծոյ հետ եւ վկայել անոր համար, երբ իր շրջապատի բոլոր մարդիկը կը փախէին ընդդէմ Աստուծոյ: Մեզմէ քանիքն են կրնան վկայել Քրիստոսի համար, երբ շրջապատուած են գժրիստոս ծաղրող մարդոցմով: Ծաղրածու այս աշխարհին մէջ, քրիստոնեայ մարդը պէտք է համարակութիւնը ունենայ ոտքի՝ կանգնելու Յիսուսի փառքին համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՂԻԱ ՍԱՐԳԱՐԷ

Եղիա մարգարեն, Եբրայեցի ժողովուրդին ամենապիղծ թագաւորին՝ Աւֆալի օրերուն, իբրեւ Աստուծոյ հաւատարիմ մարգարէ, բոլորին կոչ կ'ուղղէր դարձի գալու կենդանի Աստուծոյ: Ան մերժուած էր իր ֆաղաֆաղներէն: Հակառակ այս վիճակին, ան չէր դադար իր նուիրական առաքելութենէն: Մարգարէին գլխաւոր մտահոգութիւնն էր մարդոց հոգիներէն փարատել անհատարմութեան մշուշը, որպէսզի հաւատփի լուսաշող մանապարհէն ընթանան եւ առաջնորդուին դէպի արդարութիւն եւ աստուածապաշտութիւն:

Եղիա մարգարէն Տիրոջ տնօրինումով կը դրկուի Սամարիա՝ մոլորած ժողովուրդին մէջ հաստատելու զԱստուած պաշտելու անհրաժեշտութիւնը, որ երաշխիքն է փրկութեան: Աստուած Եղիա մարգարէին միջոցով ժողովուրդին մեծամեծ նշաններ ցոյց կու տար: Տիրոջ հրամանով, Եղիա մարգարէն ժողովուրդը իր շուրջ հաւաքելով կը բարձրանայ Կարմեղոս լեռ, Բահաղի մարգարէներուն եւ ամբողջ ժողովուրդին ցոյց տալու, թէ Տէրն է միակ Աստուածը: Տասներկու ֆար կը հաւաքէ, Յակոբի որդիներու ցեղերուն թիւով, եւ անոնցմով զոհասեղան կը սարքէ, վրան փայտ կը դնէ եւ հորթ կը զոհէ: Յետոյ կը հրամայէ զոհասեղանին վրայ. «Չորս սափոր շուրով լեցուցէ՛ք, ու թափեցէ՛ք ողջակէզին վրայ եւ փայտերուն վրայ» (Գ. Թագաւորաց 18.34), ապա կը սկսի աղօթել:

Մարգարէին աղօթքէն ետք երկինքէն կրակ կ'իջնէ, որ ողջակէզը, փայտերը, ֆարերն ու հողը կ'այրէ եւ ջուրն ալ կը սպառէ: Ժողովուրդը այս երեսոյթը տեսնելով, երեսի վրայ կ'իյնայ ու կ'ըսէ. «Նհովան է միակ Աստուածը» (Գ. Թագաւորաց 18.39):

Աւետարանին մէջ կը կարդանք, թէ Քրիստոսի այլակերպութեան ժամանակ Մովսէսն ու Եղիան կ'երեսին Յիսուսի:

Եղիա մարգարէն, իր կեանքի աւարտին, իրեն յաջորդ՝ Եղիսէ մարգարէի հետ Յորդանան գետին մօտ կը կանգնի եւ ահա հրեղէն կառք մը ձիւնով զինք կ'առաջնորդեն դէպի երկինք: Ան իր վերակումն կը ձգէ Եղիսէին, որպէսզի շարունակէ կատարել մարգարէութեան սուրբ պաշտօնը (Գ. Թագաւորաց 2):

Եղիա մարգարէի աստուածահաճոյ կեանքը թող օրինակ դառնայ մեզի, որպէսզի մենք եւս կարենանք հաստատ ֆայլերով եւ ամբակուռ հաւատով ուղղուիլ դէպի Քրիստոս, որ իր լոյսով կը պայծառակերպէ մեր հոգիները, եւ կը խոստանայ բոլոր արդարները լուսաւորել ու արժանացնել երկինքի արքայութեան (Մատթէոս 13.43):

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԻԱՆ

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ԶԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ:

Ս. Հաղորդութիւն կը կոչենք Պատարագի արարողութեան ընթացքին օրհնուած հացն ու գինին, որոնք Ս. Հոգւոյն զօրութեամբ կը գոյափոխուին մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մարմինն եւ արեան:

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՄԵՐ ՄԵՂՔԵՐԸ ՄՈՌՆԱԿԱՎ՝ ՄԵՐ ՈՐՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԿԵՂՈՒՄՆԵՆՔ ՄԵՐ ԵՂՔԱՅՐՆԵՐՈՒ ՄԵՂՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները պահ մը մոռցած էին իրենց գործած բարոյական մեղքերը եւ իրենց ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուցած էին այս խեղճ կնոջ վրայ, որ շնութիւն ըրած ատեն բռնուեցաւ (Յհ. 8.4): Քրիստոս իր յանդիմանական խօսքով. «Ձեր մէջէն անմեղը թող ինք առաջին քարը նետէ անոր վրայ» (Յհ. 8.7), հրաւիրեց զանոնք իրենց ուշադրութիւնը կեդրոնացնելու իրենց գործած բոլոր մեղքերուն վրայ ընդհանրապէս եւ բարոյական մեղքերուն վրայ մասնաւորաբար:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Դ Ա Ս Ը

Սիրելի ընթերցող, չդատապարտենք Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները շնացող կնոջ նկատմամբ իրենց ցուցաբերած անգութ վերաբերմունքին համար, այլ եկէք քննենք մենք զմեզ եւ տեսնենք, թէ արդեօք մենք եւս իրենց նման անողորմաբար չե՞նք վերաբերիր մեր եղբայրներուն եւ քոյրերուն հետ: Մենք եւս յաճախ մոռնալով մեր 88 գործած յանցանքները՝ մեր հայեացքները չե՞նք կեդրոնացնել ուրիշներուն գործած յանցանքներուն վրայ:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

Եթէ կ'ուզես գիտնալ անհաւատութեան էութիւնը, անոր արմատը եղող բարոյական ապականութիւնը եւ անոր վախճանը կարդա՛ ՍԱՂՄՈՍ 14

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին, «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներուն մէջ ինկան: Չկայ՝ մէկը՞ որ բարին գործէ: Տէ՛րԸ երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ խոտորեցան եւ մոլութեան գիրկը ինկան: Չկայ՝ մէկը, որ բարին գործէ, չկայ՝ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք խելի պիտի չգա՞նք բոլոր անոնք՝ որոնք չարիք կը գործեն, անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս, եւ ՏԻՐՈՋԸ չեն աղօթք: Բայց յանկարծակի՝ Տէ՛րԸ զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

Չարագործները աղֆատին խորհուրդները կը հեզնեն, բայց Տէ՛րԸ ի՛նքն է անոր ապաւէնը: Ո՛հ տեսնէ՛ր՝ Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ: Երբ Տէ՛րԸ ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ ՄԻՇՏ ԱՂՈԹԵՆՔ